

St Gregory Armenian Church Parish Directory

<i>Parish Council</i>	<i>Howard Emirhanian</i>	<i>(909) 596-1010</i>
<i>Ladies Society</i>	<i>Joan Meymarian</i>	<i>(626) 794-6771</i>
<i>Men's Forum</i>	<i>Berj Gourdikian</i>	<i>(626) 355-8780</i>
<i>Friendship Club</i>	<i>Jeannette Kevorkian</i>	<i>(818) 244-7222</i>
<i>A.C.Y.O</i>	<i>Matthew Simonian</i>	<i>(626) 423-4373</i>
<i>Choir Director</i>	<i>Elise Tashjian</i>	<i>(626) 356-9208</i>
<i>Hovsepian School Office</i>		<i>(626) 578-1343</i>
<i>Hovsepian School</i>	<i>Asbed Tatouljian</i>	<i>(818) 923-1113</i>
<i>Saturday School</i>	<i>Norayr Dadouryan</i>	<i>(626) 683-7211</i>
<i>Sunday School</i>	<i>Marguerite Hougasian</i>	<i>(626) 351-8137</i>

Coming Events

Wed 10/5/16 Friendship Club Luncheon	12:00p.m.
Wed 10/19/16 Ladies Luncheon	12:00p.m.
Sun 10/23/16 Sunday School Bowling	5:00-7:00p.m.

Կարելոր Ծանուցում

Կը խնդրենք մեր հաւատացեալներէն մնալ եկեղեցի Կիրակի օրուան պաշտամունքի ընթացքին մինչեւ վերջ ի յարգանք այն ընտանիքներուն, որ հոգեհանգստեան պաշտօն խնդրած են: Հոգեհանգիստը միայն խնդրողներուն համար չէ, այլ մեր բոլոր նշեցեալներուն համար է: Հանցեք եկեղեցի մնալ մինչեւ վերջ, ստանալու համար արձակման օրհնութիւնը, համբուրելով Սբ. Աւետարանը:

Հոգեւոր Հովիւ

Important Notice

We kindly request that during services, the faithful remain in church following Holy Communion, as a sign of respect for the families who have requested requiem service for their loved ones. Additionally, we ask that following the final blessing, we all honor the tradition of approaching and reverently kissing the Holy Bible.

Parish Priest

Մարկոսի Աւետարանէն (Mark) 11: 27-33

Դարձեալ Երուսաղէմ եկան: Եւ մինչ ան այնտեղ, տաճարին մէջ կը շրջէր, քահանայապետները, դպիրները եւ ծերերը մօտեցան անոր ու ըսին. «Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես դուն այդ բաները, եւ ո՞վ տուա քեզի այդ իշխանութիւնը» Յիսուս պատասխան տուա եւ ըսաւ անոնց. «Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, պատասխանեցէ՛ք ինձի, եւ ես ձեզի պիտի ըսեմ թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս ամէնը: Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՞ն էր թէ մարդոցմէ պատասխանեցէ՛ք ինձի»: Անոնք իրարու փետ խորհուրդ կ'ընէին ու կ'ըսէին. «Եթէ ըսենք երկինքէն, մեզի պիտի ըսէ հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ եթէ ըսենք մարդոցմէ, ժողովուրդէն կը վախճանք»: որովհետեւ բոլորն ալ գիտէին թէ Յովհաննէս մարգարէ էր: Պատասխանեցին եւ ըսին Յիսուսի՝ չենք գիտեր: Եւ Յիսուս անոնց պատասխանեց ու ըսաւ. «Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ այս ամէնը:

And they come again to Jerusalem: and as he was walking in the temple, there come to him the chief priests, and the scribes, and the elders; and they said unto him, By what authority Are you doing these things? or who gave thee this authority to do these things?

And Jesus said unto them, I will ask of you one question, and answer me, and I will tell you by what authority I do these things. The baptism of John, was it from heaven, or from men? answer me.

And they reasoned with themselves, saying, If we shall say, From heaven; He will say, Why then did you not believe him?

But should we say, From men--they feared the people: for all true held John to be a prophet.

And they answered Jesus and said we know not. And Jesus said unto them, Neither will I tell you by what authority I do these things.

Հոգեհանգիստ – Requiem

- A requiem service in memory of Anahid Kolajian on the occasion of the 3rd year of her passing is requested by Hampartsoum & Vera Arabian.
- A requiem service in memory of Yervant Ourfalian on the occasion of the 45th year of his passing and all Ourfalian family deceased is requested by Hagop & Manoushag Ourfalian and All Ourfalians.
- A requiem service in memory of George Tavoukjian on the occasion of the first year of his passing is requested by Aline Tavoukjian, Mike & Hermin Tavoukjian and sons Arman & Christian, Shahe Tavoukjian
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի Անահիտ Գոյաճեանի մահուան երրորդ տարեկիցին առթիւ: Խնդրողներն են՝ Համբարձում եւ Վերա Արապեան:
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի Երուանդ Ուրֆալեանի մահուան 45րդ տարեկիցին եւ համայն Ուրֆալեան գերդաստանի ֆին եւ նոր նշեցեալներուն հոգիներուն համար: Խնդրողներն են՝ Յակոբ եւ Մանուշակ Ուրֆալեան եւ բոլոր Ուրֆալեանները:
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի Ճօրն Թաւօքճեանի մահուան առաջին տարեկիցին առթիւ: Խնդրողներն են՝ Ալին Թաւօքճեան, Մայք եւ Հէրմին Թաւօքճեան եւ զաւակները Արման եւ Գրիստեան, Շահէ Թաւօքճեան:

2 Corinthians (Բ. Կորնթ) 13: 5-13

Examine yourselves to see whether you are living in the faith. Test yourselves. Do you not realize that Jesus Christ is in you? Unless, indeed, you fail to meet the test. I hope you will find out that we have not failed. But we pray to God that you may not do anything wrong, not that we may appear to have met the test, but that you may do what is right, though we may seem to have failed.

For we cannot do anything against the truth, but only for the truth. For we reject when we are weak and you are strong. This is what we pray for, that you may become perfect. So I write these things while I am away from you, so that when I come, I may not have to be severe in using the authority that the Lord has given me for building up and not for tearing down.

Finally brothers and sisters, farewell. Put things in order, listen to my appeal, agree with one another, live in peace; and the God of love and peace will be with you. Greet one another with a holy kiss. All the saints greet you.

The grace of the Lord Jesus Christ, the love of God, and the communion of the Holy Spirit be with you all. Amen.

Փորձեցէ՛ք դուք ձեզ՝ թէ հաւատքին մէջն է՞ք. քննեցէ՛ք դուք ձեզ: Չէ՞ք գիտեր դուք ձեզմէ՛ թէ Յիսուս Քրիստոս ձեր մէջն է, եթէ խոտելի չ'ըլլաք: Բայց կը յուսամ թէ պիտի գիտնաք՝ թէ մենք խոտելի չ'ենք: Կ'աղօթեմ Աստուծոյ՝ որ դուք ո՛չ մէկ չարիք ընէք. ո՛չ թէ՛ որպէսզի մենք գնահատելի երեւինք. հապա՛ որպէսզի դուք ընէք ինչ որ պարկեշտ է. թէև մենք խոտելի թլուինք: Որովհետև ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, հապա՛ ճշմարտութեան համար: Քանի որ կ'ուրախանանք՝ երբ մենք տկար ենք, իսկ դուք՝ զօրաւոր էք. սա՛ կ'ըղձանք նաեւ ձեր կատարելութիւնը: Ուստի կը գրեմ ձեզի այս բաները՝ բացակայ ըլլալով, որպէսզի երբ ներկայ ըլլամ՝ սաստկութեամբ չվարուիմ այն իրաւասութեան համեմատ, որ Տէրը տուաւ ինձի՝ շինելու, եւ ո՛չ թէ քանդելու համար:

Վերջապէս, եղբայրներ, ո՛ղջ եղէք: Կատարեա՛լ եղէք, լա՛ւ մխիթարուեցէք, միաբա՛ն եղէք, խաղաղութեա՛մբ ապրեցէք. եւ սիրոյ ու խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ: Բարեւեցէ՛ք զիրար սուրբ համբոյրով. բոլոր սուրբերը կը բարեւեն ձեզ: Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր բոլորին հետ: Ամէն:

AVAILABLE FOR SPONSORSHIP

If you would enjoy the opportunity of investing in the growth of our parish, please consider sponsoring one of the following items, either in your name or in memory of your loved one:

Stained Glass Window in the Sanctuary	\$10,000
Stained Glass Window near steps to Balcony	\$5,000
Small Chandelier	\$5,000
Narthex Doors (main/inside)	\$15,000
One of Two New Side Altars	t.b.d.
Elevator	\$25,000
Bell Tower Mural	\$100,000

St. Gregory Sunday School

Every Sunday Morning 11:00a.m. 12:30p.m.

Ages 4 - High School Are Welcome

Registration for 2016-2017 on September 11, 2016

Dunaians Hall 11:00a.m. to 12:30p.m.

For information call Marguerite Hougasian (626) 351-8137

**“Train up a child in the way he should go
And when he is old, he will not depart from it.”**

Proverbs 22:6

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Վարժարան

Ամէն Կիրակի Առաւօտեան 11:00 - 12:30

Տունայեանց սրահին մէջ

Արձանագրութիւններ 2016-2017 համար

Սեպտեմբեր 11, 2016-ին

Յատկեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել

Մարկրիթ Ղուկասեանին՝ (626) 351-8137


«Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը,
որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի»

Առաւօլ 22:6

Արցախի Հայերը Պէտք ունին Ձեր Օգնութեան
 Միացե՛ք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հաւատացեալներուն օգնելու համար մեր եղբայրներուն եւ քոյրերուն Ղարաբաղի մէջ սաստարելու Արեւմտեան Առաջնորդարանի Արցախի Մարդասիրական Ֆոնտին: Հասոյթը պիտի յատկացուի զոհուած զինուորներու ընտանիքներուն որոնք քաջաբար պահպանած են Արցախի սահմանները եւ նաեւ ընտանիքներուն որոնք կորսնցուցած են իրենց տուները Ազերիներու զօրքերու կողմէ: Այս ումբակործումին պատճառաւ շատ հայ ընտանիքներ անտուն մնացին Ապրիլի սկիզբէն առանց որեւէ օգնութիւններու ծրագրի: Այս ընտանիքները կը վստահին եկեղեցիներու իրենց աօրտեայ պէտքերուն համար: Բոլոր նուիրատուութիւնները պիտի գործածուին ի նպաստ այս Ֆոնտին եւ տուրքերէ զերծ են:

Armenians in Artsakh Need Your Support

Join St. Gregory efforts to help our brothers and sisters in Nagorno-Karabagh by helping us to contribute to the Western Diocese Humanitarian Fund for Artsakh. This fund benefits the families of the fallen soldiers who bravely protected the borders of Artsakh and those families who have suffered losses as a result of the military aggression perpetrated by Azerbaijan's Armed Forces. Today, many families remain homeless as a result of the bombing campaigns which took place during the conflict at the beginning of April. Impoverished, and without a support system, these families are depending on the church's support to meet their daily needs. All donations are tax deductible and 100% of the donations will be used toward the fund's purpose.



“God loves a cheerful giver” 2Cor.-9:7

Wish List

We are kindly requesting a family or donor to cover the expense of editing and printing the service books we have prepared for today’s service (\$326), commemorating the 25th anniversary of Armenia’s independance. If you would like to contribute or sponsor the booklet, please see one of the parish council members.

Փաստօրհանգի Սր. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Շաբաթօրեայ Դպրոց
 Արձանագրութիւն եւ վերամուտ Օգոստոս 20, 2016
Դասաւանդութիւն 10:00-1:00

2016-2017

**St. Gregory The Illuminator Appostolic Church,
 Pasadena
 Saturday School
 Registrations & Classes August 20, 2016 10:00-1:00**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Շաբաթօրեայ Վարժարանի մէջ ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ
 Չափահասերու Համար
 Ամէն Շաբաթ օր
 10:00-1:00
 Տեղեկութիւններու համար դիմել
 Պրն. Նորայր Տատուրեանի 626-683-7211
 Մայր նիւթեր
 Գրաձանաչութիւն . Երկխօսութիւն . Առօրեայ արտայայտութիւններ . Հայրենագիտութիւն . Հայաստանը Այսօր

**St Gregory The Illuminator Armenian Saturday School
 Armenian Language Courses For Adults
 Every Saturday 10:00-1:00p.m.
 For More Information Please Call
 Mr. Norayr Dadouryan 626-683-7211
 Main Subjects**

Alphabet, Conversations, Armenian History And Armenia Today

Երգչախումբը սիրով կ'ընդունի նոր անդամներ
Հետաքրքրուողները հաճին դիմել
Էլիզ Թաշճեանի՝ Երգչախումբի ղեկավարին
The Choir welcomes new members
If you are interested, please see Elise Tashjian,
the Choir Director

ANNOUNCEMENT

The Pastor is available to visit our parishioners in the hospital, nursing homes, or conduct Home Blessings, and other sacramental needs and consultations. Please call the church office at 626-449-1523. We would like to increase our outreach to church members who are unable to attend services. Any parishioner who has a concern is welcome to call the pastor or the Parish Council

Կը խնդրուի անջատել ձեր բջիջային
հեռախօսները եկեղեցի մտնելէն առաջ

Please turn off your cell phone
when entering the church.

Հոգեհանգստեան Խնդրանքներ
Հոգեհանգստեան խնդրանքները հաճեցէք ներկայացնել մինչեւ
Հինգշաբթի Կէսօր, որպէսզի կարելի ըլլայ յիշել Թերթիկին մէջ

Requiem Services

We ask those who wish to have hokehankisd conducted for their loved ones on a given Sunday, to please submit their names by Thursday noon for printing in the Sunday Bulletin

Remember The Church In Your Will

If certain information is omitted, missing or incorrect in this issue, please excuse any occurrences and contact the Church Office so we may make the correction in the next issue of the Bulletin

ST. GREGORY ORTHODOX **BOOKSTORE**

Visit our bookstore!

Gifts for any occasion are available

**Very Affordable, Highly Attractive
Invaluable Books of Armenian Church
History for all your Friends and
Family**



Every Sunday after
Church Services



Ս. ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՐԱԽԱՆՈՒԹ

Որեւէ առիթով՝ ձեր նուէրներուն
համար Այցելեցէք եկեղեցույս
ԳՐԱԽԱՆՈՒԹը

Մատչելի Գիներ

Արժեքաւոր Պատմական Հատորներ
Ձեր Հնտանիքին եւ Բարեկամներուն
Համար

Ամէն Կիրակի Ս. Պատարագէն ետք

Commemoration of Christ's Seventy two Disciples

Besides the 12 Apostles, Jesus also had 72 disciples, whom he sent to “preach the Good News to all nations”. Unfortunately, those disciples’ names are not mentioned in the Gospels. In the New Testament the word “disciple” is used of the followers of Jesus

Christ. Christ sent out His apostles and disciples “like lambs among wolves” two by two, to go ahead of Him to every town and place where he himself was about to go, saying to them: “Whoever listens to you listens to me; whoever rejects you rejects me; and whoever rejects me rejects the one who sent me...” (The Gospel according to Luke 10:16). There are hardly any differences between the 12 apostles and the 72 disciples, they have the same power and authority and the same mission (The Gospel according to Luke 10:9; 9:1). However, the names of all 72 disciples, like the names of the 40 innocent children martyred in Bethlehem, are known to God only and are written in the sacred book of the Heavenly Kingdom.

Քրիստոսի 72 Աշակերտներու Յիշատակութեան Օր

Բացի 12 առաքելներէն Յիսուս ունէր նաեւ 72 աշակերտներ, որոնց ուղղարկեց Բարի Լուրը քարոզելու բոլոր ազգերուն: Դժբախտաբար Աւետարանին մէջ նշուած չեն այս աշակերտներու անունները, սակայն Աւետարանէրուն մէջ “աշակերտ” բառը ընդհանրապէս կը գործածուի Քրիստոսի բոլոր հետետորդներու համար: Յիսուս Քրիստոս իր առաքելներուն եւ աշակերտներու “Իբրեւ գառներ գայլերու մէջ” երկու-երկու ուղղարկեց՝ քարոզելու Աստուծոյ Արքայութիւնը՝ ըսելով. “Ով ձեզ կը լսէ, Ինձ կը լսէ, եւ ով ձեզ կը մերժէ, Ինձի ալ մերժած կ’ըլլայ” (Ղուկաս 10:16)! Առաքելներու եւ աշակերտներու մէջ գրեթէ տարբերութիւն չիկայ, անոնք ունէին նոյն իշխանութիւնը եւ նոյն առաքելութիւնը (Ղուկաս 10:9-10; 9:1), սակայն բոլոր աշակերտներու անունները, Բեթլեհեմի սուրբ մանուկներու նման, միայն Աստուծոյ են յայտնի՝ գրուած երկինքի արքայութեան սրբազան գիրքի մէջ:

Հայ Առաքելական եկեղեցին Քրիստոսի աշակերտներու յիշատակութեան օրը կը տոնէ Վարագայ Խաչի յաջորդող շաբաթ օրը:

PARISH FELLOWSHIP HOUR

Our Parish Fellowship Hour, which follows Divine Liturgy each week in the Yegavian Hall, is a wonderful opportunity for parishioners to meet, greet and enjoy one another’s company. It’s truly one of the most important aspects of our community life, and is more than a time to enjoy coffee, tea and refreshments.

We have always relied on parishioners to host the Parish Fellowship Hour, for which we are grateful. In that tradition, we ask that any individual, couple, family or group of families to come forward and pledge their support in hosting Fellowship Hour on either a happy occasion or in memory of a loved one.

We take this opportunity to thank all the volunteers who have hosted the Parish Fellowship Hour thus far, as we encourage others to come forward and do likewise.

To host a Parish Fellowship Hour or learn more about this program, please contact the church office at 626-449-1523 or email at stgregoryarmenianchurch@yahoo.com

St. Gregory Membership

New and Continuing Members

We would like to thank all current members of St. Gregory Armenian Church who have already renewed their membership for 2016. Please be reminded that to vote at the next annual Parish Assembly Meeting in February 2017, your dues of \$100 must be paid in the 2016 calendar year. As a member, you will be able to vote and fully participate in the Annual Assembly, hold an elective office within the parish, receive email and be listed in the church membership directory. If you are a parishioner who is not current member, please consider joining and supporting the parish community. Please contact the church office to learn more.

HUMANITARIAN AID

As part of the Western Diocese campaign for Syrian humanitarian aid, a basket has been placed in the nartex of the sanctuary on the candle table. If you are interested in supporting this cause, you may kindly leave your donation, which will be sent to the Western Diocese along with donations from all other Western Diocese parishes.

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Մասնակցելով Արեւմտեան Առաջնորդարանի ընդհանուր Սուրեայի օգնութեան շարժումին, կողով մը գետեղուած է եկեղեցու գաւիթին մէջ: Անոնք որոնք կը փափաքին օգնել, հաճեցէք ձեր նուիրատուութիւնը դնել կողովին մէջ, որ պիտի ղրկուի առաջնորդարան ինչպէս բոլոր միւս ծովխերու Նուիրատուութիւնները: